Արձանագրություն N2

(նիստը կայացել է 2023թ. սեպտեմբերի 29-ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ծնողական խորհրդի 12 անդամներից 10-ը, բացակա՝ 2 -ը: Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

2. ԾԽ կազմից կառավարման «Նորապատի միջնակարգ դպրոց» և «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) անդամի ընտրություն:

1. Դպրոցի ԾԽ նախագահը ներկայացրեց օրակարգը:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել միաձայն:

2. ԾԽ կազմից կառավարման «Նորապատի միջնակարգ դպրոց» և «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) անդամի ընտրություն:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

1. Լսեցին- Դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը կառավարման խորհրդում ԾԽ-ից անդամ ընտրելու վերաբերյալ:

Նա մասնավորապես նշեց, որ համաձայն պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի 14-րդ կետի (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թ. մարտի 15N 25-Ն հրաման)՝ ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել այն անձը, որը միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության աշխատակից: Քանի որ Նունե Պապյանը 2023թ. սեպտեմբերի 8-ից հանդիսանում է Մայիսյանի դպրոցի աշխատակիցը, կառավարման խորհրդում նրա լիազորությունները դադարեցվել են, և հարկավոր է վերստին ԾԽ կողմից ընտրություն կազմակերպել, ընտրել նոր անդամ: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով (Ավետիսյան Ազնիվ, Մերգևոսյան Գայանե):

Խորհուրդն առաջարկեց 1-ին դասարանի ԾԽ նախագահ Մերի Ավետիսյանի և 5-րդ դասարանի ԾԽ նախագահ Օլյա Շուշանովայի թեկնածությունը: Կազմակերպվեց փակ քվեարկություն:

Հաշվիչ հանձնաժողովն արձանագրեց հետևյալ արդյունքը՝

Ավետիսյան Մերի- 7 կողմ

Շուշանովա Օլյա- 3 կողմ

Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ ծնողական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Դիմել Արմավիրի մարզպետ պ.Է.Հովհաննիսյանին Մերի Ավետիսյանի անդամությունը կառավարման խորհրդում հաստատելու համար:

Դպրոցի ծնողական խորհրդի

նախագահ՝ Ա.Զաքարյան

քարտուղար՝ Ա.Մարգարյան